

ՔԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՊՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիոյ համար	
Տարեկան	12 Ձր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ժր.
Վեցամսեայ	1.50 »

ՎԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
Ծանուցանելու տղոց անարհիւ  
երեսին համար 40 սանթիմ  
է. իսկ վեճիկն երեսի հա-  
մար 20 սանթիմ է. երեսին  
անի ի սանթիմերու համար  
20. 010 զեղը կըլլայ:

Պոչխարիոյ համար ձեռքի  
(Գ Ի Ե 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկի  
հմբարդուքնանս հասցիկն

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեմ տրուիր

Արտասահմանի համար ձեռքի  
(Գ Ի Ե 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

Ա Ձ Դ

Ընթերցասիրաց ընկերութիւնը  
ներկայիս ուրախութեամբ կու-  
գայ ծանուցանել տեղւոյն արգոյ  
հայ հասարակութեան թէ՛ վեր-  
ջերս հաստատած է Ընթերցարան  
մը որ, կը գտնուի թաղ. Պուլ-  
կարական ազգային «գլխադին»  
տակը:

Առ այժմ, մինչ ցնոր անօրի-  
նութիւն, Ընթերցարանը կը բա-  
ցուի ամէն օր, առաւօտեան ժամը  
9ին եւ բաց կը մնայ մինչեւ ժամը  
11 1/2. կէս օրէն վերջ ժամը 1—9  
գիշերուան. իսկ շաբաթ օրերը՝  
բացառաբար ստիպողական եւ այլ  
բանաւոր պատճառաւ Ընթերցա-  
րանը պիտի բացուի առաւօտեան  
ժամը 9—12 ու յետ միջօրէի ժամը  
3—9 գիշերուան:

Այս առթիւ ընկերութիւնս  
պարտք կը համարէ հրաւեր կար-  
գալ ուսումնասիր արգոյ ազգա-  
յնոց Ընթերցարան յաճախել եւ  
իրենց պարագայ ժամերը օգտա-  
շատ ընթերցանութեամբ ան-  
ցընել:

Կը խնդրուի նա եւս, ամէն ա-  
նոնք որք՝ կը փափաքին ունէ  
նուիրատուութեամբ Ընթերցա-  
տան ճոխացման գործին սատար  
հանգիստանալ. այդպիսիք՝ թող  
հաճին մեզ փութացնել իրենց  
նուէրը, կանխաւ յայտնելով ի-  
րենց մեր անկեղծ շնորհակալ-  
եաց հաւատարմքը: Մնամք

Վարչութիւն Ընթ. Ընկ.  
Վառնայի (Կնիք)  
Վառնա, 5 Փետրուար

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պուրջէ, Պ. Ա. Պարագեան. —  
Կը սպասենք դրամները եւ չի վճարող  
բաժանորդներու ցանկը. որպէս զի  
թերթը գաղտնից ենք:  
— Պ. Ճիվէլէկեան. — Կը խնդրենք  
առանց ուշացնելու դրկէք ֆէլօստէն-  
ճէն գանձած բաժնեգիրները:  
— Չերնա Ողա. (Ռուսմանիա). —  
Թերթը կը դրկենք, բայց դրամը  
ուղղակի խմբագրութեանս հասցէին  
դրկեցէք, որովհետեւ ֆէլօստէնճէն առ  
այժմ մենք գործակալ չունինք:  
— Նիւ-Եօրթ. Յօլ Ճիվէլէկեան. —  
Կսպասենք որ 1898ին ֆէլօստէնճէն  
գանձած դրամներու մանրամասն  
հաշիւը եւ դրամը ուղարկէք: Մենք  
ունինք ձեր նամակները որով զեռ  
երկու տարի առաջ կը խնդրէիք սպա-  
սել. կը կարծենք թէ շատ եւ շատ  
պատեցինք:  
—(—)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՈՒԼԻՆ

Պ. Մամուրեան «Նրբելեան»  
Մամուրի վերջին թիւին մէջ  
այս անգամ ուշագրաւ խմբագրա-  
կան մը զետեղած էր որուն նիւ-  
թին կարծիքով թեանը պատճա-  
ռով քանի մը դիտողութիւններ  
ընել հարկ սեպեցի:

Այդ յօդուածին մէջ Պ. Մամուր-  
եան պատմագէտի հետաքրքրու-  
մով ու պատգամախօսի մը յա-  
ւակնստ շեշտելով հայուն անց-  
եալը կը պրպտէ, կը քննէ ու  
զուր պատմական փաստերու վրայ  
կը թնամ բանադրուիկ ճիշդ մը  
կընէ համոզելու համար իր ըն-  
թերցողները թէ հայը իր միջա-  
վայրի եւ խառնուածքի հետեւան-  
քով անընդունակ է ունէ շար-  
ժումի կամ յեղափոխութեան եւ  
թէ սոյդ շարժումը յառաջ բերող  
լեզուները գրիչները շատ զէշ  
զարծ մը կատարած եղան. շար-  
ժում մը որուն միակ արդիւնքը  
եղած է եղբր ազգին բարոյակուն  
անկումը:

Իբր դարձան այդ զահալէժ  
անկումին «ազգասէր, հայրենա-  
սէր» Պ. Մամուրեան կտաղա-  
կէ որ հայերը ետեւէ ըլլան սոսկ  
իրենց մտաւարդարացումին Օս-  
մանեան կայսերական «Մեծա-  
փառ հովանաւորութեան» տակ,  
վասնզի, իր անկեղծ համոզումն  
է եղբր որ հայերը Օսմ. կտաղ-  
վարութեանն զորս ուրիշ երկրի  
մը մէջ հինգ հարիւր տարիէ  
ի վեր արդէն կորսուած փճացած  
պիտի ըլլային:

Առաջին անգամը չէ որ Պ. Մա-  
մուրեան այս տեսակ տրամաբա-  
նութեանն զուրկ տրամաբանու-  
թիւններով կը մրտաէ իր թեր-  
թը, հետեւաբար տեղի չի կայ  
զարմանալու:

Բայց հարցնենք անգամ մը Պ.  
Մամուրեանի թէ ո՞ր դարուն մէջ  
հայը իր գոյութեան ամենէն  
նուիրական կուրը չէ մղած եւ  
ինչ հեղինակութեամբ կը յան-  
գանի ըսելու թէ հայը իր մի-  
ջավայրի ու խառնուածքի բեր-  
մունքով անընդունակ է շարժելու:

Անցեալին մէջ շատ խոշոր սխալ-  
ներ, անարդարանալի վարչական  
պառակտումներ ունեցած ենք.  
Ինչպէս են նախարարական դրու-  
թիւնը (նման այսօրուան աղայա-  
կան դրութեան) աւատականութիւ-  
նը, կուսակցութիւնը, բայց  
այդ չի նշանակեր թէ անընդու-  
նակ ենք շարժելու. ընդհակա-  
ռակը միշտ շարժած ենք ու մենք  
այդ շարժումներուն կը պարտինք  
մեր արդի գոյութիւնը:

Մտաւորական զարգացում կը բռնէ  
Պ. Մամուրեան բայց չի բացատ-  
րեր բնաւ թէ զարգացումը հայը  
ինչ կերպով կընայ ստանալ երբ  
ամէն կողմէն խենչէ թշնամիներ  
նախանձոտի վայրագ նայուածքով  
զինքը կը դիտեն ու ոչք թշնա-  
միներէն մէկը կեղծ թրով միւսը  
թուրով գանակով մահուան-  
ստուերի պէս զինքը կը սպասեն  
լափելու համար եւ պատե՛հ ժա-  
մուն յափշտակելու իր ձեռքէն  
ինչ որ ունի:

Ենդեղուած մտաւորական զար-  
գացումը կընանք ստանալ եթէ  
կուրիլ գիտնանք: Զարգանալու  
հակամէտ ժողովուրդ մը պէտք է  
գիտնայ նաեւ կուրիլ, մանա-  
ւանդ միջավայրի մը մէջ՝ որուն  
մէջ ծայրէն միւսը բարբառոսու-  
թիւնը կը թոնամուրթիւնը եւ տղի-  
տութիւնը կը տիրապետեն:

Երբ Պ. Մամուրեան ամբողջ  
հայութիւնը խել մը շարժումէ,  
կուրիլ խուսափող յեղափոխութեան  
թշնամի հարուստներուն վրայ  
չափել կուզէ, խոշոր սխալ մըն է  
որ կը գործէ. ու այդ սխալը  
չբնականք չընդունենք քանի որ  
ինքը անցեալին մէջ խանդոտ  
կուսակցի մը եղած է կուրիլ:

«Արեւելեան Մամուրի» խմբ-  
բարգապետը հանգստա էտ քաղա-  
քի մը ամէն վայելքներուն մէջ  
արգեօ՞ք կը մոռնայ թէ անդին  
Հայաստանի մէջ ի՞նչ նախճիր-  
ներ կը գործուին եւ ինչո՞ւ կը շա-  
րունակէ քննադատել կուրիլ մը որ  
շատ անխուսափելի հետեւանքն  
էր վատ Ռէժիմի տիրապետու-  
թեան, թէեւ կը խոստովանի թէ  
հայերը հինգ դարէ ի վեր քա-  
ղաքակրթութեան որոշ տասիճան  
մը ունեցող ուրիշ որեւէ կտաւ:

վարութեան մէջ արդէն փճացած  
պիտի ըլլային:

Արեւմտեան բարբառոսութիւնը ա-  
ռաջին շարժումի թն է որով հա-  
յերը իբր քաղաքակրթութեան  
անկեղծ բարեկամանոր դարբնոր  
թշնամիին զէժ կուտեցան ու  
իրենց գոյութիւնը այդ կերպով  
ապահովեցին ու կապահովեն:

Պ. Մամուրեանէն պիտի խնդ-  
րէինք որ գոնէ յետադարձ նայ-  
ուածքը մը ձգէր անցեալին վրայ  
ուր ըսած է ինքը ինչ որ այսօր  
մենք կը բռնենք: Քանի մը տարուան  
մէջ այսքան մեծ փոփոխութիւն  
իրաւ որ շատ զարմանալի է: Այդ  
փոփոխութիւնը կարծել կուտայ  
մեզի թէ Պ. Մամուրեան գամէ-  
լէօնական դրութիւնը ընդունած  
է:

Գալով հայուն բարոյական ան-  
կումին որուն վրայ կողբայ, լա-  
ւազոյն կը լլար երբ այդ ար-  
ցունքները նախ իր վրայ թափէր  
Պ. Մամուրեան որ մեծ անունի  
մը տակ ճշմունքակարգի մը պա-  
հելու զժբաղդութիւն ունեցած  
է. յետոյ սոսկ անունով հայ այն  
հարուստներուն վրայ որ հոյա-  
կապ ապարանքներ ունենալէ ու  
չահամուրթեանն վատ ուրիշ ունէ  
ազնիւ իտէալ կամ նպատակա-  
կէտ ունեցած չեն իրենց կեան-  
քին մէջ:

Հայ ժողովուրդը աւելի քան  
երեք իր բարոյական բարձրու-  
թեան վրայ է. այդ մասին թող  
անհոգ ըլլայ Պ. խմբագրապետը:  
Իբր վերջաբան պիտի առա-  
ջարկէինք Պ. Մամուրեանի որ  
այլ եւս յօրեղինաւորի մը անա-  
ղարա երջանկութիւնը վայելէ ու  
իր ձեռքացած ուղեղին մզլոտ  
չիզերէն զուրս սպրդող վատա-  
նող խորհրդածութիւնները  
հրապարակով չը նետէ:

ԳԱՂԱԿ

Իզմիր, 5 Փետրուար

—(—)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԻԿՐԱՆԱԿԵՐՏ, 25 ԴԵԿՏ.

Մերիկե եղբայր իմ,


Երկար ժամանակէ ի վեր չի գրելու համար չը կարծէք թէ «խեր ու խաղաղութիւն» կը տիրէ հաս. միայն կասկածի թուրք կառավարութեան վերջի խաղցած խաղը գրել ձեզ, Հոս հալածանք, յափշտակութիւն, դողովութիւն, մարդասպանութիւն եւ զրպարտութիւն օրուան խնդիր դարձեր է. թուրքն ու քրեարք մէկ կողմէն կը տանջեն զմեզ, սովը միւս կողմէն. իսկ թաղական խորհուրդը՝ նա մանաւանդ սեղանոյս առաջնորդ Եղեղիէլ վարդապետը այն ալ սեսակ մը աէրտ ու պալայ դարձեր են հայ հասարակութեան գլխուն: Էրզրումի մէջ կախուած «Արամ Արամեան»ի մահուան գոյժը հոս հասնելէն վերջ, բոլոր քրեարքն ու թուրքերը մէկ մէկ առիւծ դարձած են հայերու գլխուն, իսկ վարագ զազաները ամէն մէկը մի վաղը դարձան. կը զարնեն կը կոտորեն ու կանցնին: Վա՛յ այն հայուն գլխուն որ կը յանդգնի բերան բանալ եւ կամ իրաւունք պահանջել. այն ստեն ամէն բան բուսած է իր գլխուն—ծեծ, հայհոյանք եւ բանտ: Պարկի՛ր, խեղճ հայ, պարկի՛ր բաղդիտ հեռ:

Հոգեհաստը եղբայր իմ,

Ձեմ գրեք ինչ գրեմ եւ ո՞րը պատմեմ. մեր օրերը ա՛խ ու վախով կանցնին՝ անօթի, ծարաւ, մերկ ու բողբոկ. ամէն աչք բանալ գոցելու մահ կը կանչենք, այն ալ հետի չէ մեզմէ քանի որ տառապեալ երկրի մէջ ենք: Ի՞նչ ըսեմ քեզ՝ ձեռքս չեմ թայ որ գրեմ. մեր դրացի քաղրթճի Սարգիսը թունաւորեց ինքզինքը ի՛նչ նիւթականի եւ ի՛նչ առեւտուրը զազրած ըլլալու պատճառաւ. կը յիշե՞ս ինչ ազնիւ ու բարի մարդ մըն էր եւ որչափ կոպէս մտերացկաններուն ու ամէն ձեռք երկնցնողներուն. լակայն ո՞վ օգնեց իրեն եւ կամ ո՞վ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀԻ ԵՆՑԻՅԵՐ, ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԽԱԳՈՒՄ



Ա. ՀԱՐԿԱՆՆԻ ԱՄՈՒԹԻՒՆ

Իբր թէ Պէրլինի 61րդ յօդուածի հիման վրայ, սար թահախաբուութիւն մը հաստատուեցաւ, որպէս զինստիկաններ կամ զօրքն այլևս հարկահաւաքութեան չիլէին, ժողովարարը չիլէրու եւ ճնշու: Էրզրումի սեղանոյս առաջնորդ Եղեղիէլ վարդապետը այն ալ սեսակ մը աէրտ ու պալայ դարձեր են հայ հասարակութեան գլխուն: Էրզրումի մէջ կախուած «Արամ Արամեան»ի մահուան գոյժը հոս հասնելէն վերջ, բոլոր քրեարքն ու թուրքերը մէկ մէկ առիւծ դարձած են հայերու գլխուն, իսկ վարագ զազաները ամէն մէկը մի վաղը դարձան. կը զարնեն կը կոտորեն ու կանցնին: Վա՛յ այն հայուն գլխուն որ կը յանդգնի բերան բանալ եւ կամ իրաւունք պահանջել. այն ստեն ամէն բան բուսած է իր գլխուն—ծեծ, հայհոյանք եւ բանտ: Պարկի՛ր, խեղճ հայ, պարկի՛ր բաղդիտ հեռ:

գրեց իր երիտասարդ հասակին... ոչ ոք: Ան ալ գնաց, ձեռք քաշեց անապեալ աշխարհէն եւ կշտացուց աչքերը ափ մը հողով:

Ո՛հ թող ծիծաղես հայ հարուստները. թող զիգնի իրենց կլորիկ սակիները եւ մէճիաները, աեսնեք երբ մեռնին հետերին պիտի տանի՞ն այդ զիգուած զեղին սակիները: Ձեմ կարծեր: Խեղճը կը մեռնի թող կուտայ իր համբաւը ու անմահ անուըն (խեղճ եկաւ խեղճ ու բարի մարդ գնաց): Իսկ հարուստը թուրք ու նահալթ: Կալով փոքր եղբայր մասին ալ լուր մը տամ, եթէ կը հարցնես իր ներկայ վիճակը, տարիէն աւելի պատկեցաւ խոնաւ բանտին մէջ (բոլիս օտասին). ամէն օր ծեծը պակաս չէր գլխուն. կախուած զինքը կարգ մը անմեղներ մատնելու (իբր յեղափոխական) բայց ինքը յաղթեց իր հզօր կամքով՝ կերպաւ ծեծը ու նստաւ, ինչպէս որ գրած էի քեզ: Իսկ այս շարժում եօթը տարի օր կտրեցին «բանտը պառկելու» եւ այսօր իր քովէն կուգամ, ըսաւ ինձ—գնա՛ր գրէ եղբորս՝ ազատ երկրի մէջ թող ուրախութիւն ընէ որովհետեւ ամէն նեղութեան զիմացայ, եւ... ուխտադրուծ չեղայ: Նոյնպէս գրէ իրեն թէ բանտարկեալ եղբայրդ երկու աչքերդ կը համբուրէ եւ թող չի մտնայ... գուցէ ես մեռնիմ ինքը վրէժս լուծէ:

Եղբայր ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ, թէ եւ ռանիմ շատ մը գրելիք, թէ եւ ուրիմ շատ մը պատմելիք ու անվերջանալի. բայց ազատ չեմ գրելու. Սուրբան Համիտ կաշկանդեր է ձեռքերինս. կը վախնանք, խուզարկութիւն ու ձերբակալութիւնք պակաս չեն. դեռ մէկ եղբայրս կը պտակի՛ր որ կարօտ կը քաշէ միշտ ընդ միշտ մէկ ծաղիկ, կանանչ խոտի եւ արեւի երեք տեսնել ու մեռնիլ: Վերջապէս քանի որ գրելը ձեռքս է, այս ալ գրեմ ու գոցեմ երկտողս. թիւ 15 օր առաջ «Երեւանի գուրդ Ֆրոքը ասի սակը» (Չըրվէժ) դիակ մը գտնուեցաւ եւ հաւատարմեցաւ հօբուցի հայ տղայ մը լինելը 15 տա-

խուճը կազմելէ ու կազմակերպելէ յետոյ, միւս կողմէն քակելու ու քանդելու հրամաններ ստանալով, սկսան հայ գիւղերը ցրուել, իւրաքանչիւր գիւղ 5—10 ձիւաւորներ, բարենորոգման քողի ներքեւ, իրենց ստոր եւ հարստահարելչ միառումներն ի գործ դնելու:

Սմենէն շուտ եւ դիւրաւ միակ միջոցը ընտրեցին սալափով ստակ տալը 1—2 ամիս ժամակամիջոցով, եւ քանի որ իրենք աղքատ, հետեւաբար չի պիտի կրնային այդ գործը առաջ տանիլ եթէ գուրտէն ուժ ստուղ մը չըլլար, եւ որովհետեւ աշխարհիս երեսը սակեց աւելի շահաւէտ բան մը ալ չի կար, ուստի՝ անկարելի էր որ փափաքողներ չըլլային, այսինքն՝ ստակ սալով շահուն ընկերանային հետերնին. հետեւաբար թիւրք սղաներ, եւ մաս մը հայ վաշխառուներ յիշուցներով մէճիախիչներ կուտային. իսկ միւս կողմէ ալ քանի մը մաս գործներու հետ պայմանաւորուած աժան աժան եւ կրնամ ըսել թէ ձրի հայ գիւղացիին անասունները ձեռքերնէն առնելով մասգործներուն կուտային, սակեց եկած շահն եւս մէջերնին բաժնելով:

Սոյ ամէն բաներ կարգադրելէ յետոյ, հարկահաւաքներն հայ գիւղեր կիջնէին, եւ քանի մը վաշխականի մէջ ամբողջ հայերը հաւաքելով, գոմի մը մէջ կը բանտարկէին, պայմանաւ

րեկան հասակի մէջ: Մարմինը կտորներու բաժնուած էր. դուրը ցցի վրայ անկուած՝ երկու ձեռները կանկիւնքով պինդ կապուած՝ քիթն ու սկանչները կտրուած: Այս խեղճ սղու կտրուած մարմինը քիթաբի մը յանձնելով տարան «Երեւան» գրան պերեզմանոցը ամփոփեցին աղանց առաջնորդին իմացելու (Եղեղիէլ վարդապետին, Հոն կային հօբուցի գիւղացիներ որոնք սպաննուած թաղականներն էին. չորս օր վերջը կառավարութիւնը ձերբակալեց այդ հօբուցիներէն երեք անձը, (իբր մարդասպաններ) ի վերջոյ երկուքը ազատ արձակուեցան մնացածը որ սպաննուածի եղբայրն էր 20 տարուան բերդագիւղութեան դատապարտուեցաւ եւ եղբորս քով միասին կը պակի բանտի մէջ:

Մնամ ձեռք եղբայր ՎՌԱՄՇԱՊՈՒՀ

ԽԵՂՃ ԵՆ

Կալթականութեան հոսանքին ենթարկուած հայը այցելեց այն պիտի երկիրներ՝ ուր իրեն անձանօթ էր թէ տեղւոյն տիրող տարրը եւ թէ տիրող օրէնքը. ահա այս պատճառաւ խեղճ տառապեալ ժողովուրդը ենթարկուեցաւ զանազան նեղութիւններու. ի հարկ է թէ տիրող օրէնքին անգիտակ իրեն համար նպատաւոր չէր կարելի լինել ամէն բան. բայց նա իր ստիպուն հաստատակամութեամբ գիմաղրեց ամէն դժուարութիւնն: Սե անոնց ամէնքին առաջ յաղթական հանդիսացաւ. բայց ամէն բան վերջապէս վերջ մը կարող էր ունենալ. անոնցմէ շատերը իրենց օրապահ կը ճարելու անկարողութեան մէջ կը գտնուէին ստիպուեցան վերագառնալ հոն,

որ մինչեւ դրամ չառնէին, չէին ձգեր: Մեծի ու հայհոյանքի ներքեւ խեղճ գիւղացիին հարկադրուած կը համակերպէր մէկ քիւլէ (որ կընէ 100 օխա) ցրեն մէկ մէճիախիչի տալու, եւ այսպէսով մէկ գիշերուան մէջ քանի մը հազար դրուչ կը հաւաքուէր: Եթէ մէկն ընդգիմանար իր թրաւունքն պաշտպանելու ո՞ր եւ է առարկութիւն մը ընելով, այդ անխիղճ անհատութեանց զէմ, վրէժ լուծելու համար ամէն տեսակ շարիքներ խեղճին գլխուն կը թափէին: Վերջ ի վերջոյ ալ մասգործն իրենց հետ առած հայուն տււնը վազելով, 150—200 դրուչ արժած կընկամ կողմ 30—40 դրուչ լուրի կը ծախէին, հայն անլծկան թողով եւ օր առաջ թշուառութիւնը փութացնելով:

Սոյ անխիղճ շահագործութիւնն այնքան առաջ տարին որ՝ երբ կալցի ժամանակ գար, երկրագործը իր մէկ տարուան աշխատանքն կալի մէջ հաւաքելով ծեծել սկսէր, զեռ ափ մը ցրեն իր տունը չը տարած կալի մէջ կը հալէր ու կը մաշէր, եւ միտիայն իր կալի մէջ մնացած հորսելին ու սակը վերցունելով կամաց կամաց զէպի իր տուն կը յառաջանար աղետաբէր հոտաշանգներ արձակելով:

Երկու աւիտ առաջ 20 դրուչի վոխարէն մէկ քիւլէ ցրեն վճարող գիւղացին, երկու ամիս յետոյ 10 դրուչէ

ուրուղէն արդէն մաղապո թ պրծած էին. այսուամենայնիւ չի թողնուեալու համար իսկ իրենց ցարձեալ ստակ էր պէտք. ինչ որ կը պակսէր, ահա ստոր համար գտնուեցան եւ այնպիսի անձեր որոնք նպատակեցին իրենց թէ բարոյական եւ թէ նիւթական օգնութիւն տան: Այդ խեղճերուն գոնէ վերջին միտիւթարութիւն մը մատուցանելու համար:

Հակառակ մեր մի քանի անգամ հայ ժողովուրդին հրաւեր կարգաւորն, չգտնուեցաւ Վառնայի մէջ ազնիւ մտածումներով տողուած խմբակներ որ ձեռնարկէր աղքատ ընտանիքներուն պատեւելու համար ու է կազմակերպուել թեան մը՝ ըստ մեր կարծեաց ստանձնել անհրաժեշտ էր. որովհետեւ այդ չբարոյները կը զրանորին արդէն մեկ շատ մտաչգիտեք թէ ի՞նչ կը մտածեն եւ չեն կարող եղբակացու թեան մը յանդի մեր ժողովուրդի գլխունները, հիմա որ քաղաքիս մէջ Ծ. վարդապետ մըն ալ կը գտնուի միթէ՞ այս անյարմար կը դառնան միթէ՞ ամիսը 20ական սանցիմ վճարելու յոժարող անձինքներ չեն գտնուիր Վառնայի հայու թեան մէջ. յիշա՛ր շատ ծիծաղելի եղած պիտի ըլլար եթէ մենք ըսէինք թէ ժողովուրդը այսպիսի բանի մը նպատեալ տրամադրութիւն չունի ի հարկէ՞ կը գտնուին և այնպիսիներ հորոք չեն յօժարիր բարենայատակ գործի մը համար տրուած ներկայացման մէկ տող սակի գինը վճարել մինչդեռ ան-

սկուեալ 100 դրուչ հարկադրուած պիտի գնէ իր ընտանիքը, սակեցիկներ համար, որ չի մեռնին. քոյր սակեցիկ եւս 2—3 ամիս պայմանաւորմամբ վճարելու պայմանաւորմամբ քանաքան պէտ խեղճն ուրիշէ. պիտի սայ յարգէն ինչ որ ունէր առած կը ձեռքէն կրկին սայաֆ, այդ 100 դրուչ հինգ քիւլէ ցրենով կալցին վճարելու: Սոյսպէսով չորս հինգ տարուան մէջ Մշոյ գաւառի ժողովուրդն անտելի թշուառութեան մէջ ինկաւ. իրենց ամէն ստացուածքներն կրթալին յետոյ կրեք լմասի հողային կալուածներն եւս դրուեցին, մէկ ամիս թիւ իրենց գրպանէն չը գտնող այդ անխիղճ գաղաններն, այսօր հայ գիւղացիին ամբողջ կալուածներուն տէր պարձան:

Ինչպէս որ առաջ ինչամ էի թէ 100 տուր գիւղի մը մէջ հազար թէ 5—10 տուն աղքատ գտնուէր, իսկ միւսուան շրջանին այդ գիւղերու երկու մասը աղքատացան, իսկ միւս մասն ալ այսօր վաղը անոնց վիճակակից պիտի ըլլան. եւ այսպէսով այդ անտանելի կացութեան չի կրնալով զիմանալով, իւրաքանչիւր գիւղէն 20—30 տուններ իրարու ետեւէն սկըսան գաղթել չի կրնալակերս. Եղեւսիս, Հալէպ եւայլն. Շատ քիչ գիւղեր. մինչեւ 1890 թուականն ամէն տեսակ թշուառութիւններու եւ

դին օտար ազգի մը համար կամ ուղղակի իրեն զուարճութեան համար առատօրէն կը վճարեն . է՛նչ ինչ ընենք . մենք ալ այնպիսիներու անունը միայն կը յիշենք . որոնք որ արդէն խղճմանքի տէր են :

Անցեալ տարի երիցս ընթերցարանի համար տրուած ներկայացմանց մէջ չէր տեսնուէր Վառնայի ջոջ գառակարգը բայց այս տարի թուրքերու նպատակն ամենքն ալ փառք Աստուծոյ ներկայ էին . բայց այս միմիայն զգալու է . մենք չենք կրնար այդպիսի բարսիրաները մեղմացնել , այլ կը յուսանք միմիայն միջակ գառակարգէն միշտ որ ամեն անգամ տրամադրութիւն ունի իր խեղճ անարարեալ եղբորը Ծրանայակը ճարելու յգաստին մասնակցելու :

ՄՈՒՐԱՏ-ՍՈՎՐԱՏ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Խմբագիր ,

Ձեր թերթի 203 թիւ մէջ Պ. Ամիրխանեացը իր «Ինչ պատասխանով» միայն իմ յարոցած խնդիրն է «բաց» ձգել , հետեւաբար ստիպում եմ նորից ձեր սիւների հիւրընկալութեանը դիմել յորպէս զի վերջնականապէս լուսարանի այդ խնդիրը հասարակութեան առջեւ :

Կանկալ չկայ , որ ինչպիսիսի հայերը ճանաչել են Պ. Ամիրխանեացին : բայց պաշտօնէն , որ այդ ճանաչողներին վերջինը ես եմ չեղել և ահա այդ է պատճառը : որ է յայտնուի հետ տեսնուելու օ՛չ մի հարցում չը առի :

նրան Գեալէ յայտնուի չը ներկայացած Պ. Ամիրխանեացը ինձ յայտնեց պարզ կերպով թէ «որոշված է միայն վերաբուժական գործիքները ուղարկել Ռոֆա , իսկ մնացած նիւթերը այստեղ պիտի գործածվին» :

Արգեօ՞ք Պ. Ամիրխանեացը կարող է ուրանալ այդ հանգամանքը :

Այդ կէտի վրայ ես չեմ տեսնում «Ինչ նամակիս» մէջ , բայց Պ. Ամիրխանեացը կարծես թէ չի ըմբռնել այդ եւ իր կամակայութիւնը ծածկելու ու «փափուկ և միամիտ սրտերի» վրայ ազդելու համար կը յայտարարէ թէ «գործիքները ու գեղարվեստը կերթան Հայաստան առաւել կարօտներու համար» : Բայց ինչո՞ւ բացառութիւն չընէ՞ բամբակի , կտաւի ու փաթածանի համար , արգեօ՞ք այդ նիւթերի էլ «առաւել կարօտներուն» չկան :

Այլ , իրականութիւնը նրա մէջն է , որ գեղարվեստը , իրենց ծաւալի և մասամբ հինցած լինելու պատճառաւ ուղարկվելու և ճանաչարհամատի արժանի չեն . հետեւաբար այստեղ պիտի մնան :

Այժմ խնդիրը նրա մէջն է թէ Պ. Ամիրխանեացը պիտի բարեհաճի հասարակութեանը տալ ի՛նչ որ հասարակութեանը արդէն կը պատկանի , կամ թէ պիտի վաճառի իր ներքեւտուն մէջ :

Իրաւ , եթէ հայ գաղթականութիւնը գերմանացիներու ուղարկած նպաստներու համար պատճառ չունէր Պ. Ամիրխանեացին երախտագէտ լինել , այժմ կատարեալ իրաւունք ունի զիջո՞ւ լինելու :

ԴՕԿՏՕՐ ԱԼ. ԱՍԱԲԷԿԼԱՆԵ  
Վառնա , 12 Փետրուար 1900

— ) ( —

ՍՏԱԽՕՍՆԵՐՈՒ

Պ. Ե. Կամսարական , հակառակ ձեր որոշ ստորագրութեամբ մէջտեղ չեւալանուող , ձեզ հասկցած եմ , և արդէն ձեր վիպակագրութեան համբաւէն ու կը ճանչցուի ձեր էութիւնը , ինչպէս կը սիրէ յայտարարել Հունգարական առածը , լաւ գիտնիս համբաւի պէտք չունի :

Ճշմարտութիւնը ձեր դատարարութիւնը կը լլայ , նոյնպէս ձեր գրչին տակ , ինչպէս ըսած էք . թէ ճիշդ է որ Մ. Գ. ի կեանքի մէջ մասը ջանացած եմք մատնացոյց ընել գլուխի մը մէջ առաւ ճիշդ է որ Մ. Ա. ը թրքական զնտանի մը խորը կը հեծէ թէ Օսմանեան կառավարութիւնը մեղմէ աւելի կը ճանչնայ Ա. ր. և նրա Մարդ մը երբոր իր սխալած և կամ խաբուած ըլլալը կզգայ ու իր սխալը իրաւի տեղ բացարձակ փաստարանական ձեւերով ժողովուրդը խաբել կը ջանայ այդ կը նշանակէ իր անձին ոչնչութիւնը դաւանել : Պ. ի զոր կը ճգնիք , հայ զարգացած խոհուն ու լուրջ դասակարգին առջեւ անպայման կերպով ստակալի անկում կրեցիք , ձեր այսօրուան ըրած առարկութիւններով ու է արգարացում չունիք . երանի թէ դուք ալ միայն ապաւունք ու անհամ բառերու հետ խաղայիք , փոխանակ այս ու այս տեսակ ծիծաղելի կատակերգութիւններ ընելու : Յետոյ մենք չըսինք որ պատմութիւնը իրական կեանքէ առնուած է և կամ առնուած չէ . միւր շօշափելիք կէտը այն է թէ , պատ-

մութիւնը իւր արժանիքը կորսնցուցած է , անոր համար որ պատմագիրը ականատես չըլլալէ զատ ականատեսներէ ալ քաղած չէ : Լաւ կարգացէք թերթը , մենք ըսած չենք թէ Յովհաննէս աղայի զէպքը գոյութիւն ունեցած չէ : այո՛ , Յովհաննէս աղան սքեայի բանտը մտած է , սակայն Վահրամի և Հրանոյշի խնդիրը սկիզբէն մինչեւ վերջը կեղծ է , և ձեզ պատմող պարոնն ալ կը ճանչնամ ձեզ կեղծած է . եթէ սխալած չեմ անոր հայ ըլլալուն վրայ , կասկած ունիմ ոչ թէ յեղ. կազմակերպութեան տեղեակ մէկը ինչպէս առկէ երեք տարի առաջ Վառնայի մէջ օճանդակ խմբի մարմնոյն հետ անդամակցած ու յետոյ ընդհանուր ժողովը միաձայն հաստատութեամբ , պարոնին , ստոր ու կեղտոտ արարքներով արտաքսած ըլլալը պիտի հաստատեմ նոյնիսկ գործադիր ժողովոյ մէկ քանի անդամներովը թէ եւ անձնական զբաղումներս չը ներէր , եթէ պարոնը ստիպէ զիս , կը խօստանամ մօտ ապագային ամբողջ մանրամասնութիւններովը խնդիրը բացատրել ազնիւ ընթերցողաց :

Յ. Գ. պարոններ , եթէ ասով ալ զո՞ն չը մնաք , ուրեմն հրամայեցէք Վառնայ ձեր ուղած մարդոցմէ մէկ ստեան մը կապենք և եթէ այդ ստեանին առջեւ անիրաւ դուրս գամ ձեր ծախքերը ապահովուած տեսնալու համար ինչ տեսակ երաշխաւոր կողմէք պատրաստ եմ ցոյց տալ , և կամ վերջնականապէս Չաքարիայի լուծեան դատապարտուեցէք :

Թ. Փ.

Վառնա , 10 Փետր.

— ) ( —

գաղանութիւններու շինարարութիւնը չի բաժնուեցուն իրենց հայրենի օճակէն :

Լաւ Արիֆ ֆաշայի անշուշտ ծրագրած կանոններէն մինն որ է — 6 տարուան մէջ իրագործուեցան . ինքը Պիթիւն նստելով եւ այդ ցաւալի խեղճութիւնները տեսնելով կը հրճուէր կը կարգաւարտ . ըստ իր կարծեաց ինչ Զեպարուան մէջ բոլորովին Մշտ աշխարհը ամբարցուալ պիտի տեսնէր :

Բ. ՄԻՒԼԹԷՉԻՄՈՒԹԻՆ

Ահա երկրորդ սարսնեցուցիչ մը եւս որ պատերազմէն առաջ բոլորովին սարքեր , և միանգամայն անձայն տասանորդ մը կը վճարուէր . իսկ պատերազմէն յետոյ երկրորդ պատուհաս մը կը հայ գեղացիին զլուեն , Եւրէն մէկ առնել . անաղիք պատճառներով տուգանքի ենթարկել , և շատ անգամ այն հաշուին բերել կէսին սիրանալով : Երկրագործի մէկ տարուան աշխատանքն մէկէն ի մէկ ժամուան մը մէջ իր աչքին առջեւ կը բաժնուէր , կարծես թէ շարունակ ինքն ևս անոր հետ աշխատած ըլլար : օրէնք և արդարութիւն այնտեղ գործ չունէր , այլ խղճմանք . արգեօք կարելի՞ էր այդ տեսակներէն խղճմանք սպասել : Ո՛չ , որովհետեւ օրէնքն իր խղճի և սպասակէն թույլ անկարգի էր քաղելու հետեւաբար չարէն

բարիք ակընկալել մեծ յիմարութիւն է , քանի որ գործը խղճին է հասած , նամանաւանդ վարչութեանց մէջ ևս պաղանի կործանարար միւլթիւն մը հաստատուած էր . մաս մը գաւաճան հայերն ևս այդ քանդիչ ուղղութեան մէջ մտտ ունէին , հետեւաբար եթէ հարկ ըլլար բողոքելու շատ պարզ է որ չի պիտի լսուէր :

Մինչև այդ միջոցներ , թիւրքեր ո՛ր է գաղափար մը չունէին գեղի այդ տասանորդի արոց մասին . անչափաւ րան մը նկատելով երբէք չէին մօտենար , այլ հայոց ձեռքն կը համարուէր . հայերն ևս այնքան չէին կրնար շահիլ , որովհետեւ չէին կրնար նոյն բանութեան բանեցնել . ինչ որ թիւրք աղան իր գաղանութեամբ կը գործադրէր . հետեւաբար հայ վախառուն երբ ժամանակը եկած հասած տեսաւ , չի կրցաւ անտարբեր վերաբերուիլ . զէպի իր շահն , այլ սկսաւ անգիտարար ընկերանալ թուրքերուն հետ զիւր աննելու մէջ , որպէս զի այդ միջոցաւ սանձարձակ կողմերէն , պատասխանատուութիւնը թիւրքին ձգելով :

Այսպիսով պատերազմէն յետոյ կատարութեան պաշտօնեաներ սկսան վատ հայերու ընկերակցութեամբ գիւղեր առնել , և անխղճօրէն կողոպտել , հարկերու որ սարկներ չէն մնացած հոց գիւղերն , որ ժամանակի ընթացքներուն — իրենց տուգանու-

թեամբ ու հաստատ կամով զիմարութիւնը , իրենց գոյութիւնն պահպանած էին , այժմ վարանեալ կեանքի մասնուած օր աւուր իրենց ոչնչացումը նախատեսելով կողոպտին :

Այլ ես հայ երկրագործն սկսաւ յուսահատական աչքով իր մշակուած հողին նայիլ , որ իր արկուն ու միւր կը կազմէին , ու իր հայրենի օճակի սիւնը , ձեւարիս է թէ երկրագործութիւնը կը ծաղկէր Մշտ գաւառներու մէջ , օր քսուօրէ րարի նախաձեռն և հետաքրքրութեամբ , այնպէս որ եթէ առաջ Մշտ գաւառներ , ցորենէ , գարիէ , կորեկէ ի գատուր ընթացքն չէր ցանել հայ երկրագործն , այդ ժամանակներ սկսած էին լուսակալի , բրինձի , փաթածակի , ֆասուլիայի , այդպիսիքութեան և պարտէզի մշակութիւններով զբաղուիլ : Նոյն միջոցին էր որ նոր հայ երկրագործ իր աչքը բացած կամաց կամաց առջ պիտի երկար իր տուգանն աշխատութեամբ , յանկարծ այնպէս հարուած մը եկաւ խեղճին զիմին . որ իր բոլոր յատարմութեան ցուցեան ծրագրուածներն յեղաշրջեց . անկից եկած արկունքն տասանորդն իսկ չէր գոցեր , եթէ մէկ արարի մէջ 500 դրուի արդիւնք մը երեւնար , 1500 դրուի տասանորդ կը պահանջուէր . և այսպիսով երկրագործի օճիքը միւլթիւնի ձեռքէ մէջ կը մնար : Այլ անկարգի կը լլար ք-

գատիլ : Եւ այդ ժամանակ քանի մը գիւղեր իսկ իրենց զանաւան պատեաններուն ձեռք չի սալով , երեսի վրայ իրողացին , և ձեռք գալով ծածկեց ամէնը :

Դէպի քակում ու քանդում առաջնորդող այդ ընթացքը հայ երկրագործն տեսնելով , հարկադրուեցաւ խոշուր բոլոր երկրագործութեան վերաբերեալ սերմունքը , և միմիայն կրկին ցորենով , գարիով և կորեկով բաւականանալ , որովհետեւ ստոր անհրաժեշտ սնունդ ըլլալը կզգար . եթէ այլ միջոցներ գտնար այն ևս պիտի ձգէր , որովհետեւ այլեւս անտանելի էր :

Որքան որ երկրագործի վրայ գործուած բանութիւնները իր գաղաթնակէտին կը հասնէին , և օր քսուօրէ տեսակ տեսակ ճնշում եր կը կրկնապատուէին , ստոր փոխադարձն նոյնչափ ալ քիչ շատ խոհուն զլուիներ իրենց գոյութիւնը պահպանելու միջոցներ ստարեր բաներու մէջ կորնէին :

Կատարական այդ բռնակալ և հայաջինջ ընթացքը հայերուն մէջ ներքին կապեր հաստատելու և անտանելի հարստանքէ միանգամ ընդ միշտ ազատելու համար , գաղափարական սարածու միեր տեղեկութեւ պատճառ եղաւ :

ՍՄԿԱՐ ՅՈՒՂԱՆՆԵՍԵԱՆ  
(Շարունակելի)

ՆԱԽԱԿ ԽՐԱԿՆԵՐԻ ԹԵՄԱՆ

Ազգային երկսեռ վարժարաններու բնագիտութեան դասերուն հարկաւոր գործիքները եւ նրա թերը գնեցու համար սուսուցչական ժողովը որոշած էր հանգանակութիւն մը բանալ Տեաք Տօքթ. Աթաբէքեանցի ձեռքով: Այս որոշումը արդէն գործադրուած ըլլալով, կը փութամ նուիրատուութեանց ցանկը ձեզի հաղորդել, խնդրելով որ հաճեք զայն հրատարակել ձեր յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ: Ուսուցչական ժողովին կողմէն շնորհակալութիւն յայտնելով յայն ազգայիններուն որոնք սիրով օժանդակեցին կրթական գործին, կաւելցնեմ թէ դպրոցներուն այն կարգի պէտքերը չեն կրցած լրանալ հանգանակուած գումարով եւ թէ հետեւաբար հանգանակութիւնը զեռ բաց կը մնայ: Նոր նուիրատուութեանց ցանկերը հետզհետէ պիտի հրատարակուին տեղական թերթերու մէջ, իսկ գտնուած գործիքներու եւ նրա թերու մանրամասն հայեր պիտի ներկայացուի վարժարաններու Պատ. հոգաբարձութեան:

Յարգանք  
Տնօրէն-դաստատու Ազգային  
վարժարանաց  
Յ. Կ. ՊՕՆՃՈՒԻԲԵԱՆ  
Վառնա, 14 փետր. 1900

ԱՆԿ ՆՈՒՆԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

Տեսք	Ձր. Աճ.
Յ. Կ. ՊՕՆՃՈՒԳԵԱՆ	2.—
Արվարիկ եւ Տիկին	2.—
Հայկ Փէշտամճեան	2.—
Տօքթ. Աթաբէքեանց	5.—
Մուրատ Երանոսեան	— 50
Ոմն	5.—
Արամ Սթանպուլուեան	5.—
Ոմն	5.—
Ազգայն	5.—
Ս. Գարրիէլեան	5.—
Ս. Ուզուն Պօղոսեան	2.—
Օննիկ Երանոսեան	3.—
Անթուան Ազարեան	5.—
Մ. Մուրատեան	2.—
Ոմն	3.—
Ոմն	3.—
Յ. Կարապետեան	3.—
Գ. Սպենճեան	3.—
Թ. Փօլատեան	2.—
Յարութիւն Սալիկեան	1.—
Արմենակ Թաղաբեան	2.—
Կ. Եազմաճեան	2.—
Ոմն	1.—
Ոմն	5.—
Ոմն	5.—
Կ. Գլորգեան	5.—
Գ. Սահաթեան	3.—
Խ. տամատեան	5.—
Ս. Է.	1.—
Սիրաք Մարգարեան	3.—
Հայրապետ Սարգիսեան	5.—
Ոմն	2.—
Նառլեան	5.—
Արսէն Էսաբաշեան	5.—
Գ. Յովհաննէսեան	2.—
Մ. Գապատայեան	3.—
Ստեփան Տէմիրճեան	3.—
Գեոր. Բարթ. Պողոսեան	4.—
Տէր Մարտիրոս Մարտիրոսեան	3.—
Տէր Սարգիս Ղարիպեան	2.—
Տէր Խորէն Բիւշիւրեան	2.—
Ս. Գանարեան	3.—
Յ. Գայազատէ	2.—

Գումար 141.50

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տամատ Մահմուտ փաշան «Ստանտարդ» թերթի մէջ հրատարակած բաց նամակի պատճէնները զիկած է Պօլսոյ բոլոր գեսպաններուն: Այդ նամակը թարգմանուած է թուրքերէն և բոլոր նախարարներուն զրկուած, նախարարական խորհուրդի ժամանակ: Բացի այդ Մահմուտ փաշան գաղտնի զրազրութեան մէջ է քանի մը բարձրաստիճան թուրքերու հետ: Եւ այդ պատճառ եղած է որ թուրք պաշտօնեաները խուզարկեն Պրանսական փոստան երկաթուղոյ վակոնի մէջ: Եւ փոխանակ այդ նամակներու պաշտօնեաները զողջած են Պօլսոյ Բրէտի Լ/օնէի ճիւղին ուղղուած գրամները: Պրանսական գեսպանը խտուր բողոքած է այս առթիւ:

Ըստ երեւոյթի Տամատ Մահմուտ փաշան բոլորովին շիմտած եր վերագառնալ. եզրպտուէն խտրով ազգական Մուհամէտ Ալի փաշայի միջոցաւ ոտացած է 20,000 օսմ. ոսկի, որով իր կեանքը Փարիզի մէջ կապահովուի:

Սուլթանը ստոյգ ազրւարէ Իմացած է որ երիտասարդ թուրքերը Տամատ փաշայի նախագահութեամբ ամառը Ժնէվի մէջ ժողով մը պիտի գումարեն:

Սուլթանը մտածեք է իր անձնական գաղտնի խորհրդարանի նախկին պետ ձէլալէտտին փաշան զրկել Տամատ փաշան համազելու, սակայն ձէլալէտտին յանձնառու եղած չէ, կասկածելով որ չը պիտի յաջողի:

Կարս-Էրզրումի երկաթուղիի գծին իրատէն գիւն եւս յայտարարուած չէ: Ռուսական գեսպանը արտաքին գործոց նախարարի հետ ունեցած տեսակցութեան մը միջոցին պնդած է որ եթէ Փոքր Ասիոյ մէջ ուրիշ մըն ալ ուզէ երկաթուղի շինել, ռուսներու առաջնութիւնը պահպանուի:

Տամատ Մահմուտ փաշան և իր երկու տղաքները հաղորդած են թէ բոլորովին սուտ է այն լուրը, որով կիմացնէին թէ Իրենք, պանս-զան բարձրաստիճան մարդոց միջամտութեամբ պիտի Պօլիս վերագառնան և աւելցուցած են.

«Ոչ մէկ կերպ, ոչ ուղղակի և ոչ անուղղակի ոչ ոք արտօնուած է խօսիլ պայմաններու մասին վերագարձի մը, որ անկարելի է նախ քան իրականանալը այն բարենորոգումներու, որ անհրաժեշտ կը դարձնէ մեր երկրի դժբախտ վիճակը և բուռն կերպով կը պահանջէ մեր ամբողջ ժողովուրդը»:

«Թան» կը հաղորդէ որ Պուրքէշի մէջ պուլկար լրտես Ֆէտուվսկին սպաննողը նոյնպէս պուլ-

կար է, անունն է Ուսա Իլիէֆ, որ յայտարարած է թէ իր սպաննութիւնը արդար գործ մըն է, որովհետեւ Ֆէտուվսկին շատ Մակեդոնացի պուլկարներ մատնած է թուրք կառավարութեան. յետոյ Իլիէֆ յայտարարած է թէ ինքն է և Սահմապուլօքը սպաննողը:

Այս սպանութիւնը և սպաննողի յայտարարութիւնները մեծ իրարանցում ձգած են. բազմաթիւ մակեդոնացի պուլկարներ ձերբակալուած են. կը կարծուի թէ Իլիէֆը ունի և խորհրդակցներ:

Պրանսական ազգային ժողովի մէջ պատերազմական նախարարը յայտարարած է որ ժէնէրալ Տէլոզ նոր թնդանօթ մը հնարք է որ մինչեւ հիմա բոլոր եղածները կը գերազանցէ:

Փետրուար 8ին Պիլլէր հեռագրած է որ անգլիացիները կողմնակի ամբողջ գիծը առնելու վրայ են. ժէնէրալ Ներտ արդէն կողմնակի առած է:

Պօլսէն փետրուար 10ին կը հեռագրեն թէ արտաքին գործոց նախարարը տեսակցութիւն մը ունեցեր է ռուսական գեսպանի հետ Փոքր Ասիոյ երկաթուղիի գծին մասին:

Ռուսիա կուզէ սպահովել ռուսական գիծերու միացումը թուրքական գիծերուն հետ:

Եւրոպական լրտեսի մը տուած տեղեկութեան համաձայն ռուսիկանութիւնը ձերբակալած է պետական խորհրդական Միւլոբուրուս րուս պէյը, և Իլիստիս Էֆէնտին՝ որ ներքին գործոց նախարարի նախկին մասնաւոր քարտուղարն էր:

Անգլիական ազգային ժողովը հաստատած է 120,000 նոր զօրք ժողովելու ծրագիրը, և ատոր պէտք ըլլալիք ծախսն ալ քուէարկած է:

Երագիր կայ և 30 պատերազմական նաւ շինել, և 75,000 ծովային զինուոր աւելցնել:

Անգլիացիները առած են և կողմնակի քաղաքը, բայց վերջին օրերս կրկին անյաջողութիւններու մատնուած են: Պօէր ժէնէրալ Բրոնտէին հետեւող անգլիական զօրքերը ճակատամարտի բռնուեք են և բաւական մեծ կորուստ տուած են:

Այս ճակատամարտի մէջ վիրաւորուած են երկու նշանաւոր ժէնէրալներ:

Եւրոպական հեռագիր մը կը հաղորդէ թէ՛ անգլիացիները քանի մը օր առաջ բոլորովին սեղմեք են Բէմպուլէյէն նահանջող Պօէր ժէնէրալ Բրոնտէին. փախստականները կը պատմեն եղբոր որ պօէրները Բրոնտէին կստիպեն եղբոր անձնատուր ըլլալ: Բրոնտէ զինադադար խնդրած է, բայց Լօրտ Բիշնէր առաջարկած է բոլորովին անձնատուր ըլլալ:

ԹԱՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱԼ»

Ի յիշատակ սրբոց Վարդանանց զօրավարաց Փետր. 17, հինգ-շաբթի գիշեր, ժամը 8 ուկէսին պիտի ներկայացուի մեծաւ պատրաստութեամբ «Վէսէլլօ» հայ դերասանական խմբին կողմանէ առաջին անգամ ըլլալով հայերէն լեզուաւ:

Մեծի, ՎԱՐԳՆԻ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, երգախառն ողբերգութիւն 6 արարուած և 1 պատկեր:

Հեղինակութիւն Տիգրան Գալէմճեանի:

Խիստ ծիծաղաշարժ զաւելու մը տաճկերէն լեզուաւ:

Գիշերը սովորական  
Լիւսոյս եմք թէ Վառնայի հայ թատերասէր հասարակութիւնը պիտի բարեհաճի իր ներկայութեամբ քաջալերել սոյն ձեռնարկը, որու համար ոչ մէկ աշխատութիւն խնայուած չէ:

Յառաջիկայ շաբաթ երեկոյ, փետր. 19, ժամը 9 ուկէսին «Վէսէլլօ» հայ դերասանական խմբին կողմանէ ընթանեկան մեծ պարահանդէս մը պիտի տ, ուր գլխավար և անդամակ Մուտք 2 ֆրանք

ԳՐԵՂՐԱՏՈՒՆ ՍԱՆԹՐԱԼ  
Տ. ԹԻԻՅԷՆԿՅԵԱՆԻ

Մուսայրիս Թաղապետական պարտիզին զինաց, նախկին Անկի, Սլավօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արդոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծաւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գարեջրատունը, յուսով եմ թէ չը պիտի զլանայ պատուարժան հասարակութիւնը իր քաջալերել:

Յ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՏՈՒԱՅ  
ԵՒ ԱՎԱՃԱՌԱՆՈՑ  
Թիւ 389 Իսկիկ-պաշի

Կը վաճառուի ծրարտու, բոսթայի եւ աղբսագրի ամէն տեսակ բուլբո նաեւ զանազան տեսակ սիկարներ: ԾԿ Թուականին հրապարակ ելած Պուլկարիոյ գահաժողովը Պօլիսի պատկերազարդ քաղթ-փոսթալներ, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս և կը վաճառուի «Շարժում»:

Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան զինաց նոր բացուած փոքրիկ գրատունը:  
Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Զարբանէլեանի գրատունը եւ իր ժրագրութեան մէջ:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԿԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐ ՀԱՒԱԿ ԱՆՈՑ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի վառնա, Ա. Զարբանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ դպրոցական եւ վիպական գրքեր. գրամի փոխարէն կը զուգուի նաեւ նամակադրոյժ. Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակադրոյժներու: